

ԳԻՏԱԿԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետությունում տարածված փոխանցողների նույնականացում, դրանց տարածագոտիների քարտեզագրում

I. ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

1. Ներկայում Հայաստանի Հանրապետությունում տարածված վարակիչ հիվանդությունների փոխանցողներից են մոծակները, մլակները, լվերը, ոջիլները, տզերը, որոնք կարող են պատճառ դառնալ հանրապետությունում արձանագրվող տարափոխիկ հիվանդությունների առկա համաճարակային իրավիճակի բարդացմանը (լեյշմանիոզ, տուլարեմիա), տարածել նախկինում հանրապետությունում տարածված, սակայն ձեռնարկված հակահամաճարակային միջոցառումների շնորհիվ վերացված (էլիմինացված) հիվանդություններ (մալարիա, մլակային տենդ, ժանտախտ, բծավոր տիֆ, հետադարձ տիֆ, Քյու տենդ, Լայմի բորրելիոզ) և հանրապետության տարածքում երբևէ չարձանագրված հիվանդություններ (Ղրիմ-Կոնգոյի հեմոռագիկ տենդ, Արևմտյան Նեղոսի տենդ, տզային էնցեֆալիտ, Դենգեյի տենդ, Չիկունգունիա տենդ, Չիկա):

2. Միջատաբանական մշտադիտարկման շրջանակներում հանրապետության տարբեր կլիմաաշխարհագրական գոտիներում իրականացվում է արյունածուծ հողվածոտանիների (մոծակներ, տզեր, մլակներ) հավաքում, տեսակավորում և նույնականացում: Հայաստանի Հանրապետությունում առկա է մոծակների 6 ցեղ, 29 տեսակ: Դրանք կարող են փոխանցել՝ մալարիա, Արևմտյան Նեղոսի տենդ, Դենգե, Չիկունգունիա, Չիկա, Ռիֆտ հովտի տենդ: Նշված հիվանդությունների կանխարգելումն անհնարին է առանց փոխանցող մոծակների տեսակային կազմի, տարածագոտիների որոշման, սեզոնային շարժի մշտադիտարկման: ՀՀ-ում տարածված են 12 տեսակի մլակներ, որոնք կարող են փոխանցել լեյշմանիոզ, մլակային տենդ հիվանդությունները: Սկսած 1999 թվականից հանրապետությունում արձանագրվում են ընդերային լեյշմանիոզի դեպքեր: Լեյշմանիոզը փոխանցող մլակները բազմանում են օրգանական աղբի կուտակումներում, հետազոտվում են միայն հասուն ձևերը, քանի որ թրթուրները հնարավոր չէ հայտնաբերել: ՀՀ-ում տարածված տզերը կարող են տարածել Քյու տենդ, Լայմի բորրելիոզ, Ղրիմ-Կոնգոյի հեմոռագիկ տենդ, տզային էնցեֆալիտ: ՀՀ հարևան բոլոր երկրներում արձանագրվում է Ղրիմ-Կոնգոյի հեմոռագիկ տենդի բարձր հիվանդացություն, ինչպես նաև՝ մահվան դեպքեր:

Հանրապետությունում վերջին տարիներին սկսել են արձանագրվել Լայմի հիվանդության և Քյու տենդի դեպքեր:

3. Վարակիչ հիվանդությունների փոխանցողների տարածվածության և տեսակային կազմի փոփոխությունները պարզաբանելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել դրանց մշտադիտարկում ՀՀ ողջ տարածքում:

II. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ

4. Սույն հետազոտության նպատակն է, օգտագործելով դաշտային աշխատանքների արդյունքում նմուշառված հողվածոտանիներին, նույնականացնել և տեսակավորել դրանք, իրականացնել առանձին տեսակների տարածագոտիների քարտեզագրում՝ բացահայտել փոխանցողով պայմանավորված հիվանդությունների տարածման ռիսկի գոտիները՝ անհրաժեշտ կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումներ իրականացնելու համար:

5. Ծրագրի ակնկալվող արդյունքն է ՀՀ տարածքի՝ փոխանցողով պայմանավորված հիվանդությունների տարածման ռիսկի գնահատում և քարտեզագրում:

III. ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԵՆ

6. Նմուշառված փոխանցողների նույնականացում և տեսակավորում. (Փոխանցողների նմուշառումն իրականացվում է մարզերում, այնուհետև տեղափոխվում Ռեֆերենս լաբորատորիա, որտեղ և կատարվում է վերջիններիս տեսակավորումը և նույնականացումը):

7. Արդյունքների վերլուծություն և քարտեզագրում. (Քարտեզագրում կատարելիս նշվում են այն տարածագոտիները, որտեղ նկատվել է վարակիչ հիվանդություններ փոխանցող հողվածոտանիների տարածագոտիների կամ խտության փոփոխություն, բացահայտվում է փոխանցողով պայմանավորված հիվանդությունների տարածման ռիսկի գոտիները, որտեղ, անհրաժեշտության դեպքում, կիրականացվեն կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումներ:

8. Գիտական հրապարակումների նախապատրաստում: (Հետազոտությունների արդյունքների մշակում, դրանց վերլուծություն՝ գիտական հոդվածի/ների պատրաստում):

Տինանսավորում՝ պետական բյուջե